ԱՐՇԱԿ ՓՈԼԱԴՅԱՆ

ՄԱՐՎԱՆՅԱՆ ԴԻՆԱՍՏԻԱՆ ԵՎ ՄԵԾ ՍԵԼՋՈՒԿՆԵՐԸ

Դիյար Բաքրում՝ Վերին Միջագետքում, ինչպես նաև Հայաստանի հարավարևմտյան գավառներում սելջուկ-թյուրքերի ի հայտ գալը ճակատագրական եղավ նաև վերը նշված տարածքում X—XI դդ. հաստատված Մայյաֆարիկին (պատմական Նփրկերտ) կենտրոնով քրդական Մարվանյան դինաստիայի համար։

Քրդական այս դինաստիայի ավելի քան հիսնամյա պատմությունը սերտորեն կապված է սելջուկյան աշխարհակալության՝ Մեծ սելջուկների (1040—1092 թթ.) պատմության հետ։ Դա այն ժամանակաշրջանն է, որի ընթացքում հիմնականում ավարտվեց Մերձավոր և Միջին արևելքի՝ Իրանի, Իրաքի, Ասորիքի, Ատրպատականի, Հայաստանի, Փոքր Ասիայի կենտրոնական և հարավային և այլ շրջանների նվաճումը սելջուկների կողմից։

Մարվանյան դինաստիայի և սելջուկների փոխհարաբերությունները ցարդ առանձին ուսումնասիրությունների առարկա չեն դարձել արևելագետների կողմից։

Մարվանյան դինաստիայի և սելջուկների փոխհարաբերությունների մասին ուշագրավ նյութեր են հաղորդում միջնադարյան սկզբնաղբյուրները։ Դրանց մեջ առավել աչքի են ընկնում արաբալեզու հեղինակների հաղորդումները, որոնք, միմյանց լրացնելով, տալիս են Մարվանյանների և Մեծ սելջուկների հարաբերությունների ընդհանուր պատկերը։ Այդ տեսակետից հատկապես կարևոր են XII դարի հեղինակ Իբն ալ-Աղրակի տվյալները, որի «Թարիխ Մայյաֆարիկին» (Մայյաֆարիկինի պատմություն) երկի վերջին մասն ամբողջությամբ նվիրված է մեզ հետաքրքրող հարցերին։ Մեր նյութի ուսումնասիրության համար պակաս կարևորություն չեն ներկայացնում XIII դարի ականա-

վոր մատենագիր Իբն ալ-Ասիրի[2] հաղորդած տեղեկությունները, որոնք շատ հաճախ ոչ միայն լրացնում են Իբն ալ-Ազրակին, այլ ավելի հավաստի են և ամփոփ են ներկայացնում տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձությունները։ Կցկտուր, բայց միաժամանակ արժեքավոր տվյալներ են պարունակում Իբն ալ-Ջաուզիի[3] (XII դ.), Իբն Խալդունի[4] (XIV դ.), Իբն Քասիբի[5] (XIV դ.), Աբուլ-Ֆիդայի[6] (XIV դ.), Իբն ալ-Վարդիի[7] (XIV դ.) և այլոց երկերը։

Սույն հոդվածում, որը շարադրվել է գլխավորապես սկզբնաղբյուրների նյութերի հիման վրա, շրջանառության մեջ են դրվել նաև այլ աղբյուրների[8] տվյալները, որոնք իրենց հերթին, ինչ-որ չափով լրացնում են արաբալեզու մատենագիրների հաղորդումները։

Եղած նյութերը ցույց են տալիս, որ Դիյար Բաքր՝ Վերին Միջագետք և այդ թվում Հայաստանի հարավարևմտյան գավառներ, թյուրք թափառող օղուզները մուտք գործեցին Ատրպատականից։ Այս նահանգը Խորասանից Իրանի վրայով դեպի Անդրկովկաս ներխուժող թյուրքմեն հրոսակների համար աշխարհագրականորեն դարձել էր գլխավոր հանգրվանը[9]։

Օղուզական ցեղերն Ատրպատական ներթափանցեցին դեռևս 1029 (Հիջրի 420 թ.), երբ Բուխարայում հաստատված սելջուկ-թյուրքմենական խմբավորումը և օղուզ-թյուրքմենական միացյալ ուժերը պարտություն կրեցին Ղազնավյան սուլթան Մահմուդից։

Իբն ալ-Ասիրն ու Իբն Խալդունը նշում են, որ Հիջ. 433 1041/42 թ. թափառող թյուրք-օղուզները շարժվելով Ատրպատականից՝ մտան Դիյար Բաքր, որոնք մինչ այդ սարսափելով Տուղրիլ բեգի եղբորից՝ Իբրահիմ Յաննալից, հեռացել էին Ջիրալից և հաստատվել Ատրպատականում[10]։ Անհնազանդ այս ցեղերն Ատրպատականում ևս երկար չմնացին. նրանց, ինչպես գրում են վերը նշված հեղինակները, հետապնդում էր Իբրահիմ Յաննալը, որոնք նրա եղբայրների՝ Տուղրիլի և Դաուդի հպատակներն էին՝ ռայան։ Օղուզները հարկադրված իրենց հետ վերցրին մի խումբ քրդերի, որոնք ճանապարհ ցույց տալով դուրս բերեցին ազ-Ջավազան (Անձևացիք), ապա՝ Ջաղիրա իբն Օմար։ Օղուզների հրամանատարներից Բուկան, Նասօղլին և այլք մտան Դիյար Բաքր, կողոպտեցին Կարդան, Բազաբդան, ալ-Հուսայնիյան և Ֆիշաբուրը։ Ջա-

զիրայի արևելյան մասում մնաց օղուզ հրամանատար Մանսուր Ղիզօղլին, որի հետ կապ հաստատեց Ջազիրա իբն Օմարի կառավարիչ՝ Մարվանյան Նասր ադ-Դաուլայի (1011—1061 թթ.) որդին՝ Սուլեյմանը։ Վերջինս թյուրք հրամանատարին առաջարկեց դաշնագիր կնքել և օղուզական մյուս խմբերի հետ հարձակվել Ասորիքի (Շամի) վրա։

Համաձայնության գալով՝ քուրդ ամիրան ճաշկերույթ կազմակերպեց թյուրք հրամանատարի պատվին, հրավիրեց Ջազիրա և ձերբակալեց նրան։ Օղուզները ցրվեցին տարբեր ուղղություններով։ Իմանալով Մարվանյան Սուլեյմանի դավադրության մասին՝ Մոսուլի արաբ ուկայլիների ամիրա Կիրվաշը մեծ զորք ուղարկեց օղուզներին ջախջախելու համար։ Մոսուլից եկած արաբական զորախմբերին միացան Ֆանակ (Փինիկ) ամրոցի տեր քուրդ բաշնավիներն ու Մարվանյան ամիրա Նասր ադ-Դաուլայի զորքերը։

Ինչպես գրում են Իբն ալ-Ասրն ու Իբն Խալդունը, արաբա-քրդական միացյալ զորախմբերը հետապնդեցին թյուրքերին և սաստիկ կռվեցին նրանց դեմ։ Պարտության մատնված օղուզներն իրենց անվտանգությունը ապահովելու համար առաջարկեցին տալ ձեռք բերած ողջ ավարը։ Սակայն արաբա-քրդական միացյալ զորքերը մերժեցին այդ, և վերսկսվեցին ընդհարումները։ Մարտի ընթացքում արաբներից շատերը վիրավորվեցին և հետ նահանջեցին։ Օղուզական որոշ խմբեր մեկնեցին Սինջար և Նիսիբին (Մըծբին) ասպատակություններ ձեռնարկելու նպատակով։ Ապա նրանք վերադարձան Ջազիրա և պաշարեցին այն։ Արաբները հեռացան դեպի Իրաք, և օղուզներն ավերեցին Դիյար Բաքրը, կողոպտեցին և գերեվարեցին։ Մարվանյան իշխան Նասր ադ-Դաուլան հարկադրված եղավ ազատ արձակելու իր տղայի՝ Սուլեյմանի կողմից ձերբակալված օղուզ հրամանատարին՝ Մանսուր իբն Ղիզօղլին։ Մինչ այդ Նասր ադ-Դաուլան բանակցեց օղուզների հետ, խոստացավ դրամ տալ և ազատել Մանսուրին միայն այն պայմանով, որ նրանք հեռանան Դիյար Բաքրի տիրույթներից։

Չնայած նա այդպես էլ վարվեց, բայց օղուզները խաբեցին նրան և, ինչպես ցույց են տալիս մեր ձեռքի տակ եղած նյութերը, դիմեցին ավելի ահավոր չարագործություններ։ Նրանց մի մասը կողոպտեց Սինջարը, Նիսիբինը, Խաբուրը և վերադարձավ։ Մի մասն էլ գնաց Ջուհայնա և ալ-Ֆարջի կողմերը և գերեվարեցին այդ

շրջանները։ Սարսափահար ուկայլիների ամիրա Կիրվաշը մտավ Մոսուլ[11]։

Նույն թվականին (1041/42 թ.) օղուզական զորախմբերը ներխուժեցին նաև Մոսուլի մարզը, գրավեցին Մոսուլ քաղաքը, որտեղից փախուստի դիմեց Կիրվաշը։ Օղուզները կողոպտեցին մարզը և բռնագրավեցին Կիրվաշի մեծաքանակ հարստությունը։ Ուկայլիների ամիրան դիմեց քուրդ և արաբ առաջնորդներին՝ օղուզներին հակահարված հասցնելու խնդրանքով[12]։ Չնայած Մոսուլի բնակչությունը ոտքի կանգնեց և ջախջախեց օղուզներին, այնուհանդերձ նրանք հաստատվեցին մարզում։

Նույն 1041/42 թ. արաբ ուկայլիների ամիրա Կիրվաշը ջախջախեց օղուզներին։ Կիրվաշի դեմ կռվելու համար Մոսուլ ժամանեցին Դիյար Բաքրում հաստատված թափառող օղուզների առաջնորդներ Բուկան և Նասօղլին։ Փախուստի մատնվելուց հետո օղուզները կրկին մեկնեցին Դիյար Բաքր՝ կողոպտելու Մարվանյան տիրույթները։ Այնուհետև, ինչպես նշում են արաբալեզու աղբյուրները, նրանք կողոպտեցին հայերին, հոռոմներին և մեկնեցին Սարպատական[13]։

Վերին Միջագետքում և հարակից շրջաններում տեղի ունեցած այս իրադարձությունների մասին Իբն ալ-Ազրակը հաղորդում է մեկ այլ տարբերակ։ Նրա տվյալների համաձայն, Հիջ. 434 (1042/43 թ.) Տուղրիլ բեգը թյուրք Բուկա և Նասօղլի անունով հրամանատարների գլխավորությամբ 10 հազարանոց զորք ուղարկեց Դիյար Բաքրը նվաճելու համար՝ այն որպես իկտա նրանց տալու պայմանով։ Հասնելով այստեղ՝ նրանք կողոպտեցին և պաշարեցին Մայյաֆարիկինը։ Մի քանի օր փակվեցին քաղաքի դարպասները, և երկու կողմերն սկսեցին բանակցել։ Մարվանյանները օղուզներին առաջարկեցին 50 հազար դինար՝ Դիյար Բաքրից հեռանալու պայմանով, բայց դա մերժվեց նրանց կողմից[14]։

Դիյար Բաքր օղուզ-թյուրքերի մուտք գործելու վերաբերյալ արաբալեզու մատենագիրները տարբեր թվականներ են հաղորդում (1041/42—1042/43 թթ.)։ Ենթադրում ենք, որ Իբն ալ-Ասիրի և Իբն Խալդոնի տվյալներն ավելի մոտ են ճշմարտությանը։ Օրինակ, չի կարելի համաձայնել Իբն ալ-Ազրակի հետ այն խնդրում, որ Բուկայի և Նասօղլիի կատարած ասպատակությունը կատարվեց Տուղրիլ բեգի հրամանով։ Եղած նյութերը ցույց են տալիս, որ այդ

շրջանում, օգտվելով ստեղծված քաղաքական իրավիճակից, սելջուկներին թշնամաբար տրամադրված օղուզներն սկսեցին ձեռնարկել, այսպես կոչված, մասնավոր ասպատակություններ՝ բնակության նոր վայրեր և ավար ձեռք բերելու նպատակով, ինչպես Ատրպատականում հաստատված օղուզների ասպատակությունները դեպի հարևան Հայաստան և հարակից այլ շրջաններ։

1048 թ. աշնանը Իբրահիմ Յաննալի գլխավորությամբ սելջուկ-թյուրքերը մեծ արշավանք ձեռնարկեցին դեպի Հայաստան և Բյուզանդական կայսրություն[15]։ Անդրադառնալով արշավանքի դրդապատճառներին՝ Իբն ալ-Ասիրը գրում է, որ Մավարաննահրից մեծ թվով թյուրքական ցեղեր ժամանեցին Իրան՝ Իբրահիմ Յաննալի մոտ։ Գերեվարելով, սելջուկները հասան Մանազկերտ, Արծն (Արզան առ-ռում), Կարնո քաղաքը (Կալիկալա) և այլն։ Հաղթելով կայսրության միացյալ զորքերին՝ սելջուկները գերի վերցրին այնպես պատրիկների թվում նաև վրաց իշխան Լիպարիտին[16]։ Իբրահիմ Յաննալը հսկայական ավարով վերադարձավ Ռեյ և ներկայացավ սուլթանին։ Լիպարիտին ազատելու համար, ինչպես հաղորդում է Իբն ալ-Ասիրը, սելջուկներին առաջարկվեց 300 000 դինար և 100 000-ի նվերներ, որը մերժվեց Տուղրիլ բեգի կողմից[17]։

1049 թ. սելջուկների և կայսրության միջև զինադադար կնքվեց։ Տուղրիլը շուրջ 4 տարի դադարեցրեց արշավանքներն ընդդեմ կայսրության, մտնավանդ որ մի կողմից նա զբաղված էր թյուրքմենների ապստամբությունների ճնշմամբ, մյուս կողմից նրա ամենագլխավոր նպատակն էր գրավել Բաղդադը՝ Աբբասյան մայրաքաղաքը[18]։

Զինադադարից հետո սելջուկյան սուլթանի պատվերով՝ նրա պատվին, խութբա տրվեց Դիյար Բաքրում, որին Նասր ադ-Դաուլան հայտնեց իր հնազանդության մասին[19]։ Տուղրիլ բեգը առանց փրկագնի ազատ արձակեց նաև վրաց իշխան Լիպարիտին։ Քուրդ ամիրան և բյուզանդական կայսրը բարձր գնահատեցին սուլթանի այդ վարմունքը և փոխարենը նրան հսկայական քանակությամբ նվերներ ուղարկեցին։ Բացի այդ, կայսրի հրամանով վերանորոգվեց Կ. Պոլսի մզկիթը և խութբա տրվեց սելջուկ առաջնորդի պատվին[20]։

1054/55 թ. (446 թ.) Տուղրիլ բեգը արշավեց Ատրպատական, մտավ Թավրիզ, որին հնազանդվեց Ռավվադյան Վահսուդան իբն Մուհամմադը։ Ապա՝ սուլթանին ենթարկվեց Գանձակի Շադդադյան Աբու-լ-Ասվարը։ Թե՛ մեկը և թե՛ մյուսը խութբա տվեցին սելջուկ սուլթանի պատվին։ Այնուհետև, նա հասավ Մանազկերտ, պաշարեց քաղաքը և կողոպտեց ողջ գավառը։ Այդ ժամանակ, նշում է Իբն ալ-Ասիրը, սուլթանին մեծ քանակությամբ նվերներ ուղարկեց Մարվանյան ամիրա Նասր ադ-Դաուլան[21]։ Ինչպես երևում է, ամիրան այդ ճանապարհով՝ նվերներ տալով, կաշառելով և հպատակությունը հայտնելով, փորձում էր խաղաղ, առանց ընդհարումների հետ մղել սելջուկներին, նույնիսկ խոստանալով զենքով ու զորքով մասնակցել Տուղրիլի հետագա արշավանքներին[22]։

1055 թ. Աբբասյան խալիֆայության մայրաքաղաք Բաղդադը նվաճելուց հետո Տուղրիլ բեգի զորքը մտավ Մոսուլի մարզը և այն խլեց արաբ ուկայլիներից։ Ապա, շարժվելով դեպի հյուսիս՝ սելջուկյան զորքը 1056/57 թ. մտավ Դիյար Բաքր և պաշարեց Մարվանյան տիրույթներից մեկը՝ Ջազիրա իբն Օմարը։ Կողոպտելով շրջանի հայկական և ասորական մի շարք վանքեր՝ սելջուկները սրախողխող արեցին բազմաթիվ քահանաների։ Մարվանյան ամիրան՝ Նասր ադ-Դաուլան, որը, Իբն ալ-Ասիրի խոսքերով, մինչ այդ ամեն օր սուլթանին նվերներ և աղ էր ուղարկում, ստիպված եղավ կրկին դրամ տալ՝ իր իշխանությունը պահպանելու համար։ Դիմելով Տուղրիլ բեգին՝ Նասր ադ-Դաուլան սկսեց համոզել նրան, թե Դիյար Բաքրում իր իշխանությունը որքան կարևոր դիրք է գրավում, պաշտպանում է մահմեդականների սահմանային գոտիները և պայքար է մղում ընդդեմ քրիստոնյաների (քաֆիրների)[23]։

Այսպիսով, վերը բերված տվյալները ցույց են տալիս, որ դինաստիայի գոյությունը պահպանելու համար Նասր ադ-Դաուլան դիմում էր տարբեր քայլերի և սելջուկներին ոչ միայն թանկարժեք նվերներ ու ունեցվածք էր տալիս[24], այլև փորձում էր համոզել, թե Դիյար Բաքրում իր դինաստիան որքան կարևոր ստրատեգիական դիրք է գրավում քրիստոնեական աշխարհի դեմ պայքարում։ Դրանով էլ՝ ընդունելով սելջուկների գերիշխանությունը, նրան հաջողվեց կանխել սելջուկների արշավանքները և ժամանակավորապես դինաստիան փրկել կործանումից։ Ուստի, պատահական չէ, որ

մինչև Նասր ադ-Դաուլայի մեռնելը՝ 1061 թ., սուլթանը համարյա լուրջ փորձեր չկատարեց միջամտելու Մարվանյանների գործերին։

Նասր ադ-Դաուլայի վախճանվելուց հետո իշխանության գլուխ անցնելու համար սուր վեճեր ծագեցին նրա երկու տղաների՝ Նիզամ ադ-Դինի և Սայիդի միջև[25]։ Դինաստիայի վեզիր Ֆախր ադ-Դաուլա իբն Ջահիրի աջակցությամբ այդ պայքարում հաղթեց Նիզամ ադ-Դին Նասիրը, որին հայրը՝ Նասր ադ-Դաուլան կտակել էր իշխանությունը։ Դինաստիայի մայրաքաղաքում՝ Մայյաֆարիկինում իշխեց Նիզամ ադ-Դինը, իսկ Ամիդում Սայիդը[26]։ Դրանով, ինչպես երևում է, չավարտվեցին երկու եղբայրների հակասությունները։ 1068 թ. սելջուկյան զորքը հասավ Մարվանյան մայրաքաղաք և սկսեց ասպատակել այն։ Որոշ բանակցություններից հետո Նիզամ ադ-Դինը 50 հազար դինար կաշառքով հետ ուղարկեց սելջուկյան զորքերին[27]։

Չնայած Նիզամ ադ-Դինը ինչ-որ չափով շարունակեց հոր քաղաքականությունը, բայց նրա օրոք սելջուկներն ավելի հաճախ փորձեր կատարեցին ներխուժելու Դիյար Բաքր։ Նման փորձ ձեռնարկեց նաև սելջուկյան Սալար Խորասանը (Խորասանի Սալարը՝ տիտղոս է—Ա. Փ.)։ Ըստ Մ. Ուռհայեցու, այս զորապետը դեպի Հայաստանի հարավային գավառներ և Ուռհայի շրջան կատարեց մի քանի արշավանքներ։ 1062 թ. երկու այլ հրամանատարների հետ հերթական արշավանքի ժամանակ Սալար Խորասանը ներխուժեց Դիյար Բաքրին սահմանակից Չորրորդ Հայքի՝ Պաղինի և Հայաստանի Միջագետքի Թլմուխի շրջանները։ Մեծ ավերածություններ կատարելով՝ նրանք զգալի քանակությամբ գերիներ վերցրին։ Եվ «երբ,—գրում է Մ. Ուռհայեցին,—Ամիթ (Ամիդ) քաղաքում նստող ամիրան՝ Նսրտոլի որդին (Նասր ադ-Դաուլայի որդին—Ա. Փ.) լսեց սոսկալի դժբախտության մասին, նամակ գրեց Սալար Խորասանին, նրա հետ բարեկամություն հաստատեց և հրամայեց իր գավառում վաճառել բոլոր գերիներին։ Նա բարի մարդ էր և քրիստոնյաներին գթացող. ամբողջ երկրով մեկ հրովարտակ հրապարակեց՝ կոչ անելով գնել բոլոր գերիներին։ Այդպես էլ եղավ։ Երբ գերիներին բերեցին Ամիթ՝ վաճառքի, շատերը քաղաքի դռների առջև նահատակվեցին։ Կարելի էր տեսնել իրեղեն լույսը, որ երկնքից իջել էր նրանց վրա»[28]։ Ամիդի ամիրան,

ըստ Մ. Ուռհայեցու, այդ ժամանակ Սայիդն[29] էր, որին, ինչպես նշվեց, տրվեց այդ քաղաքն իր շրջանով ու ամրոցներով։

Լսելով Սալար Խորասանի ահավոր վայրագությունների մասին՝ բյուզանդական կայսրը Դուկաս Ֆրանկոպոլիի (Հերվե) գլխավորությամբ զորք ուղարկեց՝ սելջուկներին հակահարված հասցընելու համար։ Ֆրանկոպոլիին իր զորքով միացավ նաև Եդեսիայի Տավտանոս զորավարը և, հետպնդելով Ատրպատականն վերադարձող սելջուկներին, պաշարեցին Ամիդը։ Քաղաքի բնակիչները կաշառելով Ֆրանկոպոլիին՝ կարողացան վերացնել պաշարումը, թեև բավական զոհեր տվեցին Տավտանոսի հետ գոտեմարտի բռնվելու ընթացքում[30]։

1064, Անիի գրավումից հետո սելջուկներն սկսեցին հաճախակի արշավել դեպի Հայկական լեռնաշխարհը և Փոքր Ասիայի խորքերը։ 1066 թ. Սալար Խորասանը գրավեց և ավերեց Ուռհայի (Եդեսիա) շրջակայքը[31]։ Նահանջի ճանապարհին նա Դիյար Բաքրում ընկավ ծուղակի մեջ և սպանվեց Մարվանյանների կողմից։ Իբն ալ-Ազրակը սխալմամբ գրում է, որ, իբր, այդ արշավանքը դեպի Դիյար Բաքր Սալար Խորասանը կատարեց սուլթան Տուղրիլ բեգի հրամանով, մինչդեռ սուլթանն այդ ժամանակ մահացել էր (1063 թ.). նրան փոխարինել էր Ալփ-Արսլանը (1063—1073)։

Իբն ալ-Ազրակը գրում է, որ Հիջրի 458 թ. ռաբի ալ-ավալ ամսին (1066 թ. փետրվարին) հինգ հազարանոց զորքի գլուխն անցած Սալար Խորասանը մտավ Դիյար Բաքր և պաշարեց Մայյաֆարիկինը։ Մարվանյան վեզիր Աբուլ-Ֆադլ Իբրահիմ իբն ալ-Անբարին բանակցություններ վարեց Սալարի հետ և խոստացավ վճարել 300 հազար դինար։ Մինչ անհրաժեշտ գումարի հանձնումը, Մարվանյան վեզիրը դավադրաբար, որպես պատանդ, Սալարի մոտ ուղարկեց Նեզամ ադ-Դինին թշնաբար տրամադրված նրա երեք եղբայրներին՝ Հասանին, Ֆադլունին և Մամեկին։ Ապա, խաբելով Սալարին, մի քանի զորականների հետ նրան հրավիրեց պալատ և իսկույն ձերբակալեց բոլորին։ Դրանից հետո Մարվանյան զորքը հարձակվեց Մայյաֆարիկինը պաշարած սելջուկների վրա։ Այդ ընթացքում սելջուկներն սպանեցին Նիզամ ադ-Դինի երկու եղբայրներին, մեկին էլ տանջամահ արեցին։ Երկու կողմերի միջև տեղի ունեցած ճակատամարտում սելջուկները պարտություն կրեցին՝ տալով շատ զերիներ։ Մի քանի օր անց Նիզամ ադ-

Դինը գլխատեց Սալար Խորասանին և պալատում ձերբակալված սելջուկ մյուս զորավարներին[32]։

1070/71 թ. սուլթան Ալփ-Արսլանը Դիյար Բաքրի վրայով արշավանք ձեռնարկեց դեպի Հալեպ։ Իմանալով այդ մասին, ինչպես գրում են արաբալեզու մի քանի հեղինակներ, Մարվանյան ամիրան գնաց և դիմավորեց նրան։ Իր հնազանդությունը հայտնելով սուլթանին՝ Նիզամ ադ-Դինը նրան տվեց նաև հարյուր հազար դինար։ Ալփ-Արսլանը մտավ Ամիդ և հիանալով հիասքանչ գավառով, մեկնեց Ուռհա։ Չկարողանալով նվաճել քաղաքը՝ նա թողեց այն և իր ճանապարհը շարունակեց դեպի Հալեպ[33]։

Այսպիսով, Մարվանյան իշխան Նիզամ ադ-Դինը ետ ճանաչեց սելջուկ Ալփ-Արսլանի գերիշխանությունը։ Մեզ այլ մանրամասներ հայտնի չեն երկու կողմերի բանակցությունների և հանդիպման ընթացքի մասին։ Եղած կցկտուր տվյալներից կարելի է ենթադրել, որ Նիզամ ադ-Դինը խոստացավ ռազմական օժանդակություն ցույց տալ սելջուկներին։

Նույն ժամանակաշրջանում սելջուկները ռազմական ակտիվ գործողություններ ծավալեցին կայսրության հարավարևելյան սահմաններում։ 1070 թ. Ալփ-Արսլանը գրեթե առանց դժվարության գրավեց Մանազկերտը։ Նա դաժան հաշվեհարդար տեսավ բնակչության հետ, որը պարտության էր մատնել նրա հորեղբորը՝ Տուղրիլ բեգին։ Վերջինս, ըստ Մ. Ուռհայեցու, մեռնելուց առաջ իբր կտակել էր նրան՝ վրեժխնդիր լինել[34]։

Կայսրությունը կանգնած էր սարսափելի վտանգի առջև։ Իհարկե, դժվար է ասել՝ այդ ժամանակ սուլթանը մտադիր էր հարձակում գործելու Բյուզանդիայի վրա, թե չէ, բայց կարելի է ենթադրել, որ նա դեռևս հաշվի էր նստում կայսրության հզորության հետ։ Մինչև Եգիպտոսի վրա հարձակում գործելն Ալփ-Արսլանի խնդրի մեջ մտնում էր սուլթանության հյուսիսարևմտյան սահմանների ամրապնդումը։ Այդ ընթացքում հակառակ վճիռ կայացրեց կայսր Ռոմանոսը. նա գտավ, որ կարելի է ռազմական գործողություններ սկսել սելջուկների դեմ։ Նրա շրջապատի շատ մարդիկ կարծում էին, որ մեկ հարվածով հնարավոր է վերջ տալ թյուրքական վտանգին և կայսրին խորհուրդ տվեցին չսպասել, այլ անցնել հարձակման[35]։

Ըստ արաբալեզու հեղինակների, 1071 թ. բյուզանդական կայսր Ռոմանոս Դիոգենեսը տարբեր ազգերից կազմած 200 հազարանոց զորքով հասավ Մանազկերտ։ Այդ լուրը լսեց Ալփ-Արսլանը, որը Հալեպից վերադարձել էր Ատրպատական և գտնվում էր Խոյ քաղաքում։ Նա շտապեց դեպի Մանազկերտ և Խլաթի մոտ մարտեր մղեց հոռոմների դեմ։ Սուլթանը շուտով Ռոմանոսին առաջարկեց հաշտություն կնքել, որը մերժվեց, և 1071 թ. օգոստոսի 19-ին սելջուկներն անցան հարձակման։ Դավաճանության հետեանքով բյուզանդական բանակը խայտառակ պարտություն կրեց, ինքը՝ կայսրը դերի ընկավ[88]։ Սելջուկները կողոպտեցին այդ շրջանները, և ավերածություններ կատարելով բազմաթիվ մարդկանց սպանեցին։ Սուլթանը վերադարձավ Ատրպատական և կառավարիչ նշանակեց Խլաթում ու Մանազկերտում, որով, ինչպես դրում է Իբն ալ-Ազրակը, այդ երկու շրջանները խլվեցին Մարվանյաններից[87]։ Դա Ալփ-Արսլանի կողմից տվյալ տարածքում Մարվանյան իշխանների գերիշխանությունը սահմանափակելու ուղղությամբ առաջին լուրջ միջոցառումն էր։ Սակայն, հավանաբար հաշվի առնելով Մարվանյանների հավատարմությունը սելջուկյան դիվանին, Ալփ-Արսլանը, որպես փոխհատուցում, նրանց վերադարձրեց Խլաթը[88]։

Սելջուկ-բյուզանդական վերը նշված հակամարտությունների վերաբերյալ Իբն ալ-Ազրակը հաղորդում է ընդարձակ մեկ այլ տարբերակ։ Նրա կարծիքով, Ալփ-Արսլանը ոչ թե Ատրպատականից, այլ Իրաքից մեկնեց Դիյար Բաքր՝ հոռոմներին ճակատամարտ տալու համար։ Սուլթանի հետ էր Մարվանյան Նիզամ ադ-Դինի եղբայրը՝ Ամիդի տեր Սայիդը։ Վերջինս Հիջրի 460 թ. (1067/68 թթ.) եղբոր հետ ունեցած հերթական վեճի պատճառով կրկին բողոքել էր սուլթանին և գտնվում էր նրա պալատում։ Իբն ալ-Ազրակի շարադրանքից երևում է, որ Նիզամ ադ-Դինը, խուսափելով սելջուկներից սպառնացող վտանգից, մեծ քանակությամբ դրամ և թանկարժեք իրեր նվիրեց Մայյաֆարիկին ժամանած սելջուկյան հայտնի վեզիր Խավաջա Նիզամ ալ-Մուլքին։

Ըստ Իբն ալ-Ազրակի, Մայյաֆարիկինում Մարվանյան գերդաստանն իր կանանցով սելջուկյան վեզիրին խնդրեցին՝ միջնորդելու սուլթանի մոտ՝ Նիզամ ադ-Դինին չվնասելու համար։ Ընդառաջելով նրանց խնդրանքին՝ վեզիրը քուրդ իշխանին տարավ

Ալփ-Արսլանի ճամբարը, որը գտնվում էր Տիգրիսի ափին։ Նիզամ ալ-Մուլքի միջնորդությամբ սուլթանն ընդունեց Նիզամ-ադ-Դինին և նրան հանձնեց եղբորը՝ Սայիդին, որով փոստորեն նա փոխեց իր որոշումը՝ հարձակվելու Մայյաֆարիկինի վրա[39]։ Սույն փաստերը, որոնք թեև չեն արձանագրվել այլ սկզբնաղբյուրներում, վկայում են, որ սելջուկների յուրաքանչյուր քայլ լարված իրադրություն էր ստեղծում Դիյար Բաքրում, ամեն անդամ հարկադրելով Մարվանյաններին՝ ինչ-որ ձևով միջոցներ ձեռնարկել։

Այսպիսով, 1071 թ. Մանազկերտի ճակատամարտից հետո, գնալով նկատելի դարձավ սելջուկյան սուլթանության առավելությունը Բյուզանդիայի նկատմամբ։ Ջնայած սկզբնաղբյուրները տարբեր տվյալներ են հաղորդում ճակատամարտի և նրա հետ կապված իրադարձությունների մասին, բայց, ի վերջո, ցույց են տալիս, որ Բյուզանդական կայսրությունը կամա թե՛ ակամա ստիպված եղավ հաշվի նստել նոր և զորեղ հակառակորդի ռազմական ներուժի ու կարողությունների հետ[40]։

Մանազկերտի ճակատամարտից հետո Մարվանյանները մի քանի տարի կարողացան պահպանել իրենց գոյությունը։ Սակայն սուլթան Մելիքշահի օրոք (1072—92) սելջուկները որոշեցին վերջ տալ Մարվանյաններին ևս[41]։ Սկզբնաղբյուրներում եղած նյութերը ցույց են տալիս, որ այդ գործում չափազանց մեծ դեր խաղաց Մարվանյան դինաստիայի նախկին վեզիր, արարաղգի Ֆախր ադ-Դաուլա իբն Ջահիրը։ Դա տեղի ունեցավ Նիզամ ադ-Դինի որդու՝ Նասիր ադ-Դաուլա Մանսուրի (1080—1085 թթ.) տիրապետության ժամանակաշրջանում։ Վերջինս հոր և հորեղբոր՝ Սայիդի մեռնելուց հետո միացրել էր դինաստիան, որին ենթարկվում էին գլխավոր քաղաքները՝ Ամիդն ու Մայյաֆարիկինը։

Նասիր ադ-Դաուլա Մանսուրից բավական դժգոհ էր սուլթան Մելիքշահի դիվանը։ Քուրդ իշխանն իր նախնիների պես թեև շարունակեց ճանաչել սելջուկների գերիշխանությունը, սակայն իր դիրքերն ամրապնդելու նպատակով բարեկամական կապեր հաստատեց Մոսուլի հարևան ուկայլիների ամիրա Շարաֆ ադ-Դաուլայի հետ։ Վերջինս, 1082—1083 թթ. նվաճելով Միջագետքի և Ջազիրայի որոշ վայրեր, հասել էր Հալեպ և դրանք միացրել իր տիրույթներին։ Այդ հողի վրա Շարաֆ ադ-Դաուլան ընդհարվեց Դամասկոսի տեր, սուլթան Մելիքշահի եղբոր՝ Թութուշի հետ։ Բա-

ցի այդ, նա կապ էր հաստատել սելջուկյան սուլթանության կրոնական և քաղաքական գլխավոր հակառակորդներից մեկի՝ Ֆաթիմյան Եգիպտոսի խալիֆայի հետ[42]։ Սուլթանի դիվանը դժգոհ էր նաև Նասիր ադ-Դաուլայից նրա համար, որ նա իշխանության վեզիր էր նշանակել ոմն քրիստոնյա բժիշկ Աբու Սալիմին, որն իր կնոջ հետ վարում էր իշխանությունների ողջ գործերը[43]։ Նոր վեզիրը պաշտպանում էր քրիստոնյա, հիմնականում հայ, ազգաբնակչության իրավունքները, որն էլ առաջացրել էր մահմեդական բնակչության դժգոհությունը։ Ահա, թե ինչու Իբն Ջահիրը դրդեց Մելիքշահին՝ վերջնականապես նվաճել Դիյար Բաքրը և այն միացնել իր սուլթանությանը։

Մեր ձեռքի տակ եղած նյութերը ցույց են տալիս, որ 1083/84 թ. Աբբասյան ալ-Կայիմ խալիֆայի վեզիրի պաշտոնից ազատվեց Իբն Ջահիրը, որին փոխարինեց որդին՝ Ամիդ ադ-Դաուլան։ Այս առթիվ տարբեր տեղեկություններ են հաղորդում միջնադարյան աղբյուրները։ Առանձին հեղինակներ գրում են, որ այդ թվականին (Հիջ. 476 թ.) Մելիքշահի և սուլթանության վեզիր Նիզամ ալ-Մուլքի խնդրանքով Բաղդադից Իսֆահան մեկնեց Իբն Ջահիրն իր գերդաստանով։ Սուլթանը նրան տվեց Դիյար Բաքրը, հրամայեց շաոժվել այնտեղ և այն խլել Մարվանյաններից, խութբա տալ իր (Մելիքշահի—Ա. Փ.) պատվին և անունը դրոշմել դրամի վրա[44]։ Ապա (1084/477 թ.), սուլթանը թյուրքմենական զորք ուղարկեց Իբն Ջահիրի ուժերը համալրելու համար, որովհետև Նասիր ադ-Դաուլան դիմել էր Շարաֆ ադ-Դաուլային՝ միացյալ ուժերով հանդես գալու ընդդեմ սելջուկների՝ նրան Ամիդը տալու պայմանով[15]։ Մարվանյանների դեմ ձեռնարկվող արշավանքին սուլթանի հրամանով մասնակցեցին Խարբերդի Ջուբուք ամիրայի զորքերը, Մանազկերտի և Մուշի ամիրա Սանդուկը, Իրաքում նվաճումներ կատարող Արթուկ բեգի և սելջուկների, Միջագետքի վասալ մի քանի արաբ ամիրաների բանակները[46]։ Երկու կողմերը՝ Մարվանյան և արաբ ուկայլիների միացյալ ուժերն ու սելջուկյան զորքերը, գոտեմարտի բռնվեցին Ամիդի մոտ։ Նկատելով ուժերի անհավասարակշռությունը և չցանկանալով վնաս պատճառել արաբներին՝ Իբն Ջահիրը դիմեց խորամանկ քայլի, առաջարկելով հաշտության պայմանագիր կնքել։ Թյուրքմենական զորավարները կռահեցին Իբն Ջահիրի մտադրությունը և գիշերով հարձակման ան-

ցան ու ջախջախեցին հակառակորդին։ Շարաֆ ադ-Դաուլան պաշարման մեջ ընկավ և, հազիվ ազատվելով, փախավ Ռակկա։ Սուլթանի զորքը հաշվեհարդար տեսավ արաբների հետ և տիրեց Մոսուլի մարզին[47]։ 1085 թ. ապրիլ ամսին Իբն Ջահիրը գրավեց Ամիդը, իսկ նույն թվականի սեպտեմբերին ներխուժեց մարվանյան մայրաքաղաք՝ Մայյաֆարիկին։ Թե՛ Ամիդը և թե՛ Մայյաֆարիկինը հանձնվեցին երկար պաշարումից հետո։ Իբն Ջահիրը բռնագրավեց Մարվանյանների մեծաքանակ հարստությունը և այն ուղարկեց սուլթանին[48]։ Նույն թվականին խիստ դիմադրությունից հետո Իբն Ջահիրին ենթարկվեց Ջազիրա իբն Օմարը, որով, ինչպես գրում են արաբալեզու հեղինակները, անկում ապրեց Մարվանյան իշխանությունը[49]։

Վերոհիշյալ դեպքերի ավելի մանրամասն նկարագրությունը տալիս է Իբն ալ-Ազրակը։ Նրա հաղորդած տվյալները, մեր կարծիքով, ավելի հավաստի են, դրանք պարզորոշ ցույց են տալիս իրադարձությունների ողջ ընթացքն ու ավարտը։

Իբն ալ-Ազրակը ամբողջ մեղքը բարդում է Իբն Ջահիրի վրա և գտնում, որ իշխանության կործանման հիմնական պատճառը նրա ագահությունն էր։ Հանգամանորեն անդրադառնալով Իբն Ջահիրի գործողություններին՝ Իբն ալ-Ազրակն ավելացնում է, որ, իմանալով Մարվանյանների իշխանության քայքայման, ներքին երկպառակությունների մասին, նա համոզեց սելջուկյան վեզիր Նիզամ ալ-Մուլքին, խոստանալով նվաճել այդ տիրույթը և տիրել Մարվանյանների հարստություններին։ Ըստ Իբն ալ-Ազրակի, սելջուկյան վեզիրն իր հերթին այդ ամենի մասին հայտնեց սուլթանին, որը հավանություն տվեց նրա ծրագրերին և Իբն Ջահիրի գլխավորությամբ զորք ուղարկեց Դիյար Բաքր։ Այդ ընթացքում Մարվանյան ամիրան՝ Նասիր ադ-Դաուլան, Մայյաֆարիկինի մեծամեծներից կազմած մի պատվիրակությամբ մեկնեց Ջազիրա, այնտեղից էլ Իսֆահան՝ սուլթանի մոտ։ Մելիքշահը Նասիր ադ-Դաուլային առաջարկեց հանձնել Դիյար Բաքրը, նրան թողնելով միայն Ամիդն ու Մայյաֆարիկինը։ Նասիր ադ-Դաուլան կտրականապես հրաժարվեց և վերադարձավ Մայյաֆարիկին։

1085 թ. Իբն Ջահիրը մտավ Դիյար Բաքր, միաժամանակ պաշարելով Ամիդն ու Մայյաֆարիկինը։ Նրա զորքերը համալրելու համար սուլթանը նոր ուժեր ուղարկեց, որով հնարավոր դար-

ձավ իրականացնել իշխանության բոլոր գավառների պաշարումը։ Երկար դիմադրությունից հետո, Իբն ալ-Ազրակի խոսքերով, 1085 թ. մայիսին հանձնվեց Ամիդը։ Նույն թվականի օգոստոսին (կամ սեպտեմբերին) սելջուկների ուժեղ հարձակումից և քաղաքի պարիսպը քանդելուց հետո ընկավ նաև Մայյաֆարիկինը։ Ապա հետզհետե Իբն Ջահիրի գլխավորած սելջուկյան զորքերը նվաճեցին ողջ Դիյար Բաքրը։ Մարվանյան ամիրային սուլթանն աքսորեց Իրաք և որպես կալվածք նրան տվեց Բաղդադի վերևում գտնվող Հարբա գյուղը[50]։

Մայյաֆարիկինը նվաճելուց հետո Իբն Ջահիրը, ինչպես վկայում են հղած նյութերը, լավ վերաբերվեց բնակչության հետ, վերանորոգեց քաղաքի պարիսպը, ողջ Դիյար Բաքրում պաշտոնյաներ և հարկահաններ նշանակեց։

Այսպիսով, 1085 թ. Մելիքշահի հրամանով դեպի Դիյար Բաքր ձեռնարկված արշավանքով սելջուկները վերջ տվեցին Մարվանյան իշխանությանը։ Այդ շրջանը միացվեց սելջուկյան սուլթանությանը և, իբրև տիրույթ, հետագա տարիներին անցավ տարբեր մարդկանց[51]։ Ինչո՞վ բացատրել սելջուկների այդ քայլը, մանավանդ որ Մարվանյան վերջին ամիրան ևս, ինչպես նշվեց, շարունակեց ճանաչել սուլթանի դիվանի գերիշխանությունը։ Այդ առթիվ պետք է նշել, որ Մարվանյան իշխանությունը բաղկացած էր հիմնականում Մայյաֆարիկինի (Նփրկերտի), Ամիդի, Խլաթի և այլ շրջաններից։ Միայն Մայյաֆարիկինի շրջանում կային շուրջ երեսուն քաղաք և այդքան էլ բերդեր։ Բացի մահմեդականներից՝ քրդերից, արաբներից, Դիյար Բաքրի հիմնական ազգաբնակչությունը, բնականաբար, հայությունն էր, Տարածքը ուներ ռազմաստրատեգիական կարևոր նշանակություն և այնտեղ Մարվանյանների առկայությունը տվյալ ժամանակաշրջանում արդեն լրջորեն խանգարում էր սելջուկներին՝ իրենց ռազմական ծրագրերն իրագործելու համար։ Բացի այդ, Դիյար Բաքրը և նրա գլխավոր քաղաքները՝ Մայյաֆարիկինը, Ամիդը, Խլաթն ու Բաղեշը գտնվում էին հիմնականում երկու մայրուղիների հանգուցակետերում, որոնք կապում էին մի կողմից՝ Իրանը Տրապիզոնի և Սիրիայի վաճառական նավահանգիստների և մյուս կողմից՝ Բյուզանդիայի կենտրոնական և արևմտյան նահանգների, այդ թվում՝ Կ. Պոլսի հետ[52]։ Դրա հետ միասին տարածքի ռազմաստրատեգիական նշանակու-

թյունը գնալով մեծանում էր՝ Մելիքշահի հակառակորդ Անատոլիայի Սուլեյմանի հիմնած սուլթանությանը վերջ տալու համար։ Ուստի, Մելիքշահի առջև խնդիր էր դրված իր աշխարհակալության ծավալապաշտական ծրագրերն իրագործելու համար վերացնել Մոսուլի, Ջազիրայի և Հալեպի տիրակալ ուկայլի Շարաֆ ադ-Դաուլային և Դիյար Բաքրի Մարվանյաններին[53]։ Պատահական չէ, որ սուլթանի դիվանը և վեզիր Նիզամ ալ-Մուլքն իսկույն հավանություն տվեցին Ֆախր ադ-Դաուլա Իբն Ջահիրի առաջարկին և դիմեցին գործնական քայլերի։

1092 թ. Մելիքշահի սպանությամբ սուլթանությունում ստեղծվեց խառնաշփոթ իրավիճակ։ Դրանից փորձեց օգտվել Մարվանյան Նասիր ադ-Դաուլա Մանսուրը։ Նա Իրաքից բարձրացավ Ջազիրա իբն Օմար, որի կողմն էր հակված Մայյաֆարիկինի բնակչության մի մասը։ Միևնույն ժամանակ Սիրիայից դեպի Դիյար Բաքր շտապեց Մելիքշահի եղբայրը՝ Թութուշ Թաջ ադ-Դաուլան։ Նա մտավ Նիսիբին (Մծբին) և դաժան հաշվեհարդար տեսավ բնակչության հետ։ Նրա հրամանով ավերվեց քաղաքի պարիսպը, սպանվեց շուրջ երկու հազար մարդ, բռնաբարվեցին կանայք[54]։ Մայյաֆարիկինի բնակչության մի մասը դիմեց Թութուշին՝ քաղաքը նրան հանձնելու խնդրանքով։ Այնուամենայնիվ, Մարվանյան Նասիր ադ-Դաուլային հաջողվեց 1093 թ. սկզբին մտնել Մայյաֆարիկին։ Նույն թվականին Թութուշը գրավեց Ամիդը և արշավեց դեպի Մայյաֆարիկին։ Նիսիբինի լուրերից սարսափահար մայյաֆարիկինցիները 1093 թ. ապրիլին առանց դիմադրության նրան հանձնեցին քաղաքի բանալիները։ Հետզհետե Թութուշին ենթարկվեց ողջ Դիյար Բաքրը։ Նրա վալիները մեկնեցին Մոսուլ, Սինջար և այլուր, որտեղից փախուստի դիմեցին արաբ ուկայլիները[55]։ Մարվանյան ամիրան՝ Նասիր ադ-Դաուլան, նույնպես հեռացավ Մայյաֆարիկինից, որի երկրորդ իշխանությունը, ըստ Իբն ալ-Ազրակի, տևեց ընդամենը հինգ ամիս[56]։ Նա ապրեց Ջազիր իբն Օմարում, ուր և մահացավ 1096 թ.։ Դրանով Դիյար Բաքրն առհավետ խլվեց Մարվանյաններից և շուրջ մեկ դար գտնվեց թյուրքմենական դինաստիաների (Սոքման Շահարմենների 1100—1207 թթ., Արտուխյանների 1101—1231 թթ.) հսկողության տակ[57]։ Մարվանյան գերդաստանի շառավիղները որոշ ժամանակ պահպանեցին իրենց գոյությունը Դիյար Բաքրի առանձին վայրերում։

1136 թ. Արտուխյան Հուսամ ադ-Դինը նրանցից խլեց վերջին ամրոցը՝ Հեթախը[58]։

Ամփոփելով՝ ասենք, որ XI դ. 40—50-ական թթ. Մերձավոր և Միջին արևելքում սելջուկ-թյուրքերի ի հայտ գալով տեղի ունեցյան պատմական խոշոր փոփոխություններ, վերափոխվեց տարածաշրջանի քաղաքական քարտեզը։ Արևելքի երբեմնի ամենահզոր պետությունը՝ Աբբասյան խալիֆայությունը դեռևս X դ. 40-ական թթ. սկսել էր քայքայվել և սելջուկների ժամանակ ևս շարունակում էր ձևականորեն գոյություն ունենալ։ Իսկ Բյուզանդական կայսրությունը ներքին խմորումների և տարբեր ճակատներում մղած պատերազմների հետևանքով խիստ թուլացել էր և դնում էր դեպի մայրամուտ։ Տեղական իշխանությունների մի մասը վերացել էր պատմության ասպարեզից, առաջացել էին նոր իշխանություններ։ Ողջ տարածքում մասնատվածության քաոսը ուղեկցվում էր մշտական հակամարտություններով և ռազմական ընդհարումներով[59]։ Բնականաբար նման պայմաններում Մարվանյան, այդ թվում՝ քրդական մյուս իշխանությունները, ի վիճակի չեղան երկար գիմագրել և մեկը մյուսի հետևից անկում ապրեցին։ Չնայած Մարվանյանները, ինչպես նկատվեց, զգալի ջանքեր գործադրեցին պահպանելու իրենց իշխանությունը, սակայն ներքին երկպառակությունների և հատկապես արտաքին՝ սելջուկյան հուժկու հարվածների տակ վերացան պատմության թատերաբեմից։

ARSHAK POLADIAN

THE MARWANID DYNASTY AND THE GREAT SELDJUKS

Among the Kurdish emitrates of X—XI A. D. the most remarkable was the Marwanid dynasty of Diyarbakr (?—1096) with the capital in Mayafarikin. The thorough study of the medieval Arabie, as well as Armenian and some other sources reveals that the relations between Marwanid Kurds and Turkic nomad tribes had begun in the forties of XI century.

Thus, before the conquer of Great Seldjuks, Turkic-speaking tribes penetrated the Marwanid territory and the neigh-

bouring areas through Atrpatakan region, where they had established themselves since the beginning of XI century. According to the sources, the migration of these barbaric tribes in Diyarbakr, as well as orher regions of the Abbasid Caliphate, to some extent contradited to the interests of Seldjuk rulers. Having their military and political interests, the Seldjuk court did not undertake serious steps against Marwanid Kurds. Nevertheless, beginning from forties as a result of active military actions against Byzantine Empire and Armenia, the Seldjuks had caused serious disturbances to Marwanids, too. Although they continued their existence for a long time, they accepted the supremacy of the Seldjuk rulers and issued 'khutba' in the honour of Sultans. Through these and other measures Marwanid emirs had tried to prevent the Seldjuk threat. Emir Nasr ad-Dawla was the one who had exerted a lot of efforts in that direction. With his mediation the Byzantine Emperor Constantine X had managed to convict Tugryl to release the captured Georgian prince Liparit.

After the death of Nasr ad-Dawla his domain was divided between his sons-Nizam ad-Din and Said. Although the Marwanid might had already passed its upper point, they continued diplomatic maneuvers with the Seldjuks even after the Byzantine defeat at Manazkert in 1071. During numerous military campaigns againts Byzantine Empire and Armenia the Seldjuk army continually attacked the Marwaind capital, Mayafarikin. And every time the Marwanids had to pay off with a lot of money and valnable presents. Devertheless, Sultan Malik-shah considered it necessary to expel the Marwanids from Diyarbakr. The Abbasid vezir Fahr ad-Dawla Ibn Djahir, who before that had served the Marwanids, played the decisive role. Ibn Djahir had the permission of Malik-shah to invade the Marvanid territory. In 1085, after furious battles the Marwanid domain was captured and incorporated into the Seldjuk Empire. The last Marwanid, Mansur, lived in Jazira till 1096. During next centuries Diyarbakr was controlled by Turkmen dynasties.

تاريخ ابن الازرق الفارقى، حققه وقدم له بدوى عبد اللطيف عوض، راجعه محمد شفيق غربال، القاهرة، ١٩٥٩

2 ابن الاثير، الكامل فى التاريخ، ج ٧-٨، القاهرة-

3 ابن الجوزي، المنتظم فى تاريخ الامم والملوك، ج ٨، حيدرآباد، ١٣٥٩

4 ابن خلدون، كتاب العبر وديوان المبتدأ والخبر، ج٣-٤ مصر، ١٢٨٤

5 ابن كثير، البداية والنهاية فى التاريخ، ج ١٢،

6 ابو الفداء، المختصر فى اخبار البشر، ج ٢، بيروت-

7 تاريخ ابن الوردى، ج ١، القاهرة، ١٢٨٥

8 Արիստակես Լաստիվերցի. *Պատմություն, թարգմ. Վ. Ա. Աբգարյանի, Երևան, 1971 թ.*, Մատթեոս Ուռհայեցի, *ժամանակագրություն, թարգմ., Ներածություն և Ծանոթ. Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1973։*

9 ابن الاثير، الكامل، ج ٨، ص ٢٤-٢٥

10 ابن الاثير، الكامل، ج ٧، ص ٣٣٨-٣٤١، ابن خلدون، ج ٣، ص ٤٥١-٤٥٢، ج ٤، ص ٢٦١، ٢٥٩

11 *Նույն տեղում։*

12 ابن الاثير، الكامل، ج ٧، ص ٣٤٢-٣٤٣

13 *Նույն տեղում։ Տե՛ս* ابن خلدون، كتاب، ج ٤، ص ٢٦١

14 تاريخ ابن الازرق، ص ١٦٠-١٦١

15 *Ավելի մանրամասն տե՛ս* Ս. Բոռնազյան, *Հայաստանը և սելջուկները XI—XII դդ., Երևան, 1980 թ., էջ 46—56։*

16 *Իրն ալ-Ասիրի երկում Լիպարիտը սխալմամբ ներկայացված է որպես Կարիտ՝ աբխազների իշխան։* ابن الاثير، الكامل، ج ٨، ص ٤٨

17 *Վրացի իշխան Լիպարիտի գերության մասին տե՛ս* Ա. Լասաիվերցի, *էջ 80—81։* Մ. Ուռհայեցի, *էջ 107,* ابن الاثير، الكامل، ج ٨، ص ٤٨

18 Ս. Բոռնազյան, *նշված աշխատություն, էջ 57։*

19 ابن كثير، البداية والنهاية، ج ١٢، ص ٥٩، ابن الاثير، الكامل، ج ٨، ص ٥٢، ٩٥

20 Նույն տեղում։ Այս մասին առհասարակ լռում են հայկական և բյուզանդական աղբյուրները։

21 تاريخ ابن الوردى، ج ١، ص ٣٥٤، ابن الاثير، الكامل، ج ٨، ص ٦٧

22 Ս. Բոռնազյան, նշված աշխատություն, էջ 71։

23 ابو الفداء، المختصر، ج ٢، ص ١٧٥، ابن الاثير، الكامل، ج ٨، ص ٧٨

24 ابن الاثير، الكامل، ج ٨ ص ٩٢

25 *К. Босворт*, Мусульманские династии, М., 1977, с. 88.

26 تاريخ ابن الوردى، ج ١، ص ٣٦٧، ابو الفداء، المختصر، ج ٢، ص ١٨١، ابن الاثير، الكامل، ج ٨، ص ٩٢

27 تاريخ ابن الازرق، ص ١٨١

28 Մ. Ուռհայեցի, էջ 92։

29 Նույն տեղում, էջ 93։

30 Նույն տեղում, էջ 93—94։

31 Նույն տեղում, էջ 104։

32 تاريخ ابن الازرق، ص ١٨٢-١٨٤

33 *Imad ad-Din al-Katib al-Isfahani*. Histoire des Seldjoucides de l'Iraq (text arab); par. M. Houtsma, II, Belden, 1889, p. 37.

تاريخ ابن الوردى، ج ١، ص ٣٧٣، ابو الفداء، المختصر، ج ٢، ١٨٦-١٨٧، ابن الاثير، الكامل، ج ٨، ص ١٠٩

34 Մ. Ուռհայեցի, էջ 128։

35 История Византии, т. II, М., 1967, с. 285—286.

36 ابن الاثير، الكامل، ج ٨، ص ١٠٩-١١٠

37 تاريخ ابن الازرق، ص ١٩٠

38 Ս. Բոռնազյան, նշված աշխատություն, էջ 209։

39 تاريخ ابن الازرق، ص ١٨٦-١٨٨

40 *Imad ad-Din al-Isfahani.* Iraq ve Horasan Selçukları tarihi, 1943, p. 37; Մ. Ոտնայեցի, էջ 133; Ա. Լաստիվերցի, էջ 101—105; Հովհաննես Սկիլիձես, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, X, Բյուզանդական աղբյուրներ, Գ, թարգմանություն բնագրից, Առաջաբան և Ծանոթագրություններ՝ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1979, էջ 241—242։

41 تاريخ ابن الازرق، ص ١٩٣، ٢٠٠

42 Ս. Ոռնազյան. Նշված աշխատություն, էջ 209։

43 تاريخ ابن الازرق، ص ٢٠٦

44 ابن الاثير، الكامل، ج ٨، ص ١٣٣

45 Ս. Ոռնազյան, Նշված աշխատություն, էջ 211։

46 *al-Isfahani.* Նշված աշխատություն, էջ 75, ابن الاثير، الكامل، ٨، ج ص ١٣٣، ابن خلدون، كتاب العبر، ج ٣، ص ٣٧٤

47 ابن الاثير، الكامل، ج ٨، ص ١٣٤-١٣٥

48 Նույն տեղում, էջ 138։

49 Նույն տեղում, էջ 139։ Ավելի մանրամասն տե՛ս նաև՝ تاريخ ابن الوردي، ج ٢، مصر، ١٢٨٥، ص ٣٨٣، ابن كثير، البداية والنهاية، ج ١٢، ص ١٢٦-١٢٧، ابن خلدون، كتاب العبر، ج ٣، ص ٤٧٥، ابو الفدا، المختصر، ج ٢، ص ١٩٦، ٢٠٠، ابن خلدون، وفيات الاعيان، ج ٢، القاهرة، ١٨٨٧، ص ٨٧

50 تاريخ ابن الازرق، ص ٢٠٦-٢١٤

51 Նույն տեղում, էջ 220—224։

52 Ս. Ոռնազյան, Նշված աշխատություն, էջ 210։

53 Նույն տեղում։

54 القلانسى، ذيل تاريخ دمشق، بيروت-ليدن، ١٩٠٨، ص ١٢٢

55 Նույն տեղում, էջ 123, 129։

56 تاريخ ابن الازرق، ص ٢٢٩-٢٣٠

57 *К. Босворт.* Мусульманские династии, с. 88.

58 القلانسى، ذيل، ص ٢٦٢

59 Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 466։